

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 ժր.

Վեցամսեայ ... 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան ... 12 ժր.

Վեցամսեայ ... 7 ժր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօլար «

ԿԱՆԵԻԿ

Ծանոցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Redaction du journal

travounk

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунк

ВАРНА

Գրքարարանը եւս չեն տրոշիր

ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մեր նախորդ երկու թիւերով ընթերցողաց ներկայացուցինք Մշոյ և Սասնոյ վերջին խժոժութեանց ցանկը, ըստ Մշոյ առաջնորդական փոխանորդի տեղեկագրին. աւելորդ չենք համարեր հաս զետեղել այդ պաշտօնական տեղեկագրի սա վերջին մասը ևս, ուղղութեամբ Պօլսոյ Պատրիարքին.

Առ այս կը մատուցանեմք Ձեր ուշադրութեան՝ արեւոտ ցուցակը Սասնոյ և Մշոյ դաշտի քարտերուն եւ խժոժական կոտորածներուն, որոնց նկարագիրը կը ստեղծէր պատրաստելու. Արկածաւոր ժողովրդեան ներկայացուցած ներկայ ցուցակներով Սասնոյ հինգ չրջանակի (Կէլիկիւզան, Շատախ, Խիւս, Տալուրիկ և Փանք գաւառակի մի մասի, բնութեամբ 42 գիւղերու (ազարախներ մեծ գիւղերուն միացած) կոտորածն է ըստ այսմ՝ 2809 այր, 2193 հին, 2771 երկխալ—ընդամենը 7773: Մնացեալ կարօտեալները 8854, Վնասուած ու կողոպտուած են 49 հիկղեցիներ այրուած 2262 բռնակութեան չէնքեր, որոնք կը պատկանէին 1369 բազմանդամ ընտանիքներու: Յուշակը կը ներկայացնէ նաեւ ներթափանցող փնտնելի ներթափ և նաեւ դաշտի աղէտին ցուցակն ալ, Առ այսմ 14,178 արկածաւորներ ունինք, անոթի, մերկ ու թշուառ, որոնք կարօտ են գերազանց միջոցաւորութեան ու մեծազանց նպաստներու: Եթէ բարեբաւ անօրէնութիւններ չը հասնին, աւելի սոսկալի պիտի ըլլայ թշուառութեան վտանգը՝ կոկոզածի աղէտէն: Այս անհուն թշուառութեան առջեւ՝ կը դիմենք և կ'աղաչենք որ հաճիք անյապաղ նպաստներ հասցնել թշուառութեան ճանկերէն ազապելու ձեր խելոյ հօտը:

Եթէ հնար է պիտի խնդրեմ, որ բարեհաճիք ներկայի մարդասիրական հաստատութեանց եւ կարմիր խաչի մարմիններու ուշադրութիւնը հրաւիրել՝ այս բերաւոր տառապողներու վրայ:

Տարօնոյ վերջին աղէտին մեծութիւնը, զոհերու թուոյն ահագնութիւնը և 14,000 է աւելի արկածեալներու անհուն թշուառութիւնը այսպէս Պաշտօնական կերպով ալ հաստատուելէ յետոյ, աւելորդ կը

համարենք անգամ մըն ալ ծանրանալ պատասխանատուներուն վրայ, և չենք ուզեր անոնց ճակտին փակցուած «ազգը զօրով ջարդել տուող խմբակ» խարանին վրայ նոր մըն ալ աւելցնել. թէ և գիտենք թէ անոնք այդ խարանով ալ չպիտի խրատուին ինչպէս չը խրատուեցան 1895 ին Տրապիզոնի մէջ Պահրի փաշան զարնելու փորձէն՝ որուն հետեանքը եղաւ անմիջապէս այդ քաղաքէն սկսիլ ընդհանուր ջարդերուն, Պօլսոյ Օսմ. Պանգալի ցոյցէն, Խանասորի «արշաւանք» էն և դէռ կարգ մը խմբական ու մասնակի տաքելու շարժումներէ, որոնք առանց մազի չափ արդիւնք մը տալու աղէտներ ստեղծելու սահմանուած էին. Այս, անոնք այդ ամէնէն չխրատուեցան ու չպիտի ալ խրատուին, քանի որ մինչեւ այս վայրկեան կը յամառին իրենց մոլոր ու եսասէր շնթաքին մէջ. քայց ժողովուրդը, ապուշ անտարբերութեամբ մը դիտող արտասահմանեան հայ ժողովուրդը պէտք է իր վճիռը տուած ըլլայ այլևս ազգին գլխուն միայն աղէտ տեղացնող այդ խմբակի մասին: Ժողովուրդը այս մեծ աղետով վերջնականապէս չարը բարիէն զանազանելու սթափումէն անմիջապէս յետոյ պէտք է իր յարուած գէպի բարին որոշ և գործնականապէս ցոյց տար. քայց ընդհանրապէս ան «մեղք Սասունին ալ գլուխը կերան, ախ ու վախ» ի նման խօսքերէ վերջ, այսօր դատապարտելի անտարբերութեամբ մը հանդիսատես կըլլայ նոյն խմբակին նորագոյն աղէտներ պատրաստելու ճիգերուն:

Եւ մենք այս անգամ կը համոզուինք թէ չէզոքի, ձեռնպահի և զգուշաւոր ազգասէրի անունին տակ անյարժ նստող սա հոծ հայութիւնը միայն աղէտ ողբալու և ննջեցեալ թաղելու ընդունակ հայութիւն

ներէ. այս դատապարտէն գոնէ իր ներկայ սերունդէն, մեծ բան սպասել յիմարութիւն մէ: Բայց միեւնոյն ատեն և այս ժամուս կրնանք իրմէ գոնէ սա չափ բան սպասել: —Եթէ Տարօնի 7000 մեռեալները թաղուեցան կամ գաղաններու կերակուր եղան, հոն կան տալու 14000 է աւելի շնչողներ որքեր, այրիներ և ծերեր, մերկ, նոթի և անպատուար: Ասոնք «օգնութիւն» կաղտալեն. անոնք մեր սեղանի փշրանքներուն կարօտը կը քաշեն, մեր մէկ կողմ նետած ցնցոտիներուն պէտք ունին որ ցուրտէն չը սառնին:

Օն, լալկաններուն, չէզոք ու զղուշ ազգասէրներուն գործելու մեծ ասպարէզ կայ. թող շարժին անոնք, և պէտք է շարժին գոնէ իրենց այդ ինքնորակումի արգարացումին համար: Տարօնոյ առաջնորդարանը օգնութիւն կաղաղակէ, բացի արտասահմանի հայերէն օտարներու, եւրոպացիներու և մարդասէր Ամերիկացիներու գիմել կառավարիկէ: Պատրիարքարանը չըջարեալանենքով գիմելներ ըրած է արդէն չատ մը հայ գաղթալայերու. եգիպտոսի և Ամերիկայի հայերը սկսած են հանգանակութեան հոնկէ, հոնկէ Ֆրանսայի արտասէր գործոյ նախարարին նպաստի գաւառներ կը զրկուին այդ նպատակաւ: Ինչու անտարբեր ու անկարեկիր մնան Պուլկարիոյ և Ռուսիայի հայերը: Ուր են այս տեղերու չէզոք և զգուշ ազգասէրները. անոնք ո՞ր ձայնի կը սպասեն որ մի քիչ քսակնուն բերանը բանան. ահա 14000 թշուառներ Սասնոյ ապառաժներու կողերէն և Մշոյ հովիտներու խորերէն միարբերան հաց ու զգեստ կաղաղակեն, և ձմեռը կը սպառնայ զանոնք սովամահ սառեցնել:

Պէտք չէ մոռնալ թէ որքախնամ ժամհարեաններ սպաննուած են, «կարմիր խաչի» ընկերութեան դրամներուն ծայրը կորսուած է և «որը թր-

բահայի քրի անունով ծախուած տոմսակներու 100,000 ռուպլին բնաւ մէջ տեղ չկայ. որը սեղէ թէ թրքահայ որքին անունն ալ չահագործուած է: Ուստի կատկածելի ձեռքերու պէտք չէ յանձնել անօթի, մերկ ու թշուառ Տարօնցիին սահմանուած նպատակները:

ԱՐԳՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգղիան կեդրոնական Ասիոյ մէջ

Մինչ Ռուսիա Մայր. Արեւելքի մէջ արեւմտեան պատերազմով մը իր ուժերը կը սպառէ, ասդին Անգլիա յարմար առիթը դրած կը համարէ իր հնգկական կայսրութեան սահմանները սպառնալից գտն, ազդեցութեան եւ տիրապետութեան նոր շրջանակներ ստեղծելու: Ահա թէ ինչ կը գրէ Բարիդան լուրջ հանգէտ մը:

«Երբ արդէն կիմացուի թէ Անգլիան տանի Հապիւ-Ուլլահ Էմիրը իր երկրը Հնգկաստանի փոխարքային կամ Անգլիոյ խնամակալութեան տակ դնել որոշած է կերպով մը, Դեհլանէն ալ լուր կը հասնի թէ Պարսկաստանի Բրիտանական զեապանը յինական պատերազմ մը ընել սկսած է Շահերու երկրին հիւսիսային եւ հարաւային հանգիներուն մէջ հոն անգլոսինդական վաճառականութիւնը կամ աւելի ճիշդը ազդեցութիւնը զօրացնող միջոցներ ձեռք տանելու համար: Անգլիոյ դեսպատը իր կառավարութենէն հրահանգ ստացել է նոր հիւպատոսարաններ հաստատելու Դաւլէթի եւ Ուրմիոյ շրջանակներուն մէջ:

«Միւս կողմէ կալիֆայի կառավարութիւնը պաշտօնապէս տեղեկացած է թէ Եթէնի կողմէ Ատէնի երկրին սահմաններու ճշգրտան գործը Բրիտանիոյ շահաւոր կերպով վճռուած է, եւ ահա կիմացուի թէ՛ երկար տարիներէ ի վեր Քուէթի մէջ բրիտանական կայան մը հաստատելու համար մշակուած ծրագիրը վերջապէս իրականացած է եւ ծերունի չէյի Մուսաբէք» որ այնչափ յամառութեամբ հակառակած էր Հնդկաստանի փոխարքայ Լօրտ Բըրդուէի պատուիրակներուն, տեղի տուած է վերջապէս անոնց ստիպումներուն եւ մանաւանդ իր ճապար անուն որդիին որ ինչպէս կըսուի շատ մոլորաբան կուսակից մըն է, անգլոսինդական ազ-

գեղացիները Պարսկական ծոցին մէջ
սարածելու :

« Այս նշանաւոր յաջողութիւնները
յաջողութեամբ կաշկածա նստող փոխ-
արքաներու հաստատութեանն չե-
կարողութեան արդիւնքն են, որոնց
գլխաւոր մտահոգութիւնը եղած է
միջա Միջին-Ասիոյ մէջ ամենագորա-
ւոր դեր մը խաղալ : Անոնք իրենց
յարաւան ջանքերուն շնորհիւ իրենց
նպատակին հասան եւ իրենց ազդե-
ցութեան ճառագայթները տարածեցին
այն բոլոր երկիրներուն մէջ որ Հինգ-
կասանը կը պարփակեն : այսպէս որ
այսօր հնդկական կտուրաւորութեան
գերազանցութիւնը հոն ամէն կողմ
ամբապէս հաստատուած է :

« Սլլիս ներքին չէ կասկածիլ թէ
ներկայիս, Պաղտատի երկաթուղին
չնոսթիւնը լինալէ առաջ, Մեծն-
Բրիտանիա իր հզօրագուծի տիրական
դիրքին մէջ չըլլայ ինչպէս Պարսկա-
կան ծոցին մէջ նոյնպէս ալ չըջակայ
գրացի երկիրներուն մէջ : Այժմ ինք
ապահով կերեւայ առաջին եւ ամէ-
նէն հաստատուն պատուները քաղելու
նոր երկաթուղին որ դերմանակն
գրամազուրիւ կը շինուի : Եւ որոնք
որ այդ երկաթուղին Սուէզի ջրանց-
քին արժէքը կը կտորէ կը կարծէին
չափազանցօրէն սխալած կերեւան :

« Պաղտատի երկաթուղին՝ բրիտանա-
կան վաճառականութեան եւ նաւա-
բարկութեան վնաս չը տալէ զատ,
պիտի ըլլայ Ասիոյ մէջ Անգլիոյ տըն-
տեսական բարօրութեան մէկ նոր դու-
րիքը ու անոր հայթայիչը Սուէզի
ջրանցքին հետ համընթաց : Այդ գծին
շինութիւնէն կասկածելով Անգլիա իր
գրամազուրիւ աշակցութիւն ընել մեր-
ժնէ յետոյ, ան հիմա ցոյց կուտայ թէ
սքանչելիօրէն համաձայն է օգուտ
քաղելու այն գէնքերէն որոնցմով
իրեն կը սպասուին : Ասկէ յետոյ
Պարսկական ծոցին մէջ իր պիւրքին
շնորհիւ, անգլո-հնդկական վաճառա-
կանութիւնը վաճառք փոխադրող ա-
մէն գլխաւոր գծերու տէրը գտնուե-
լով, Միջին Արեւելքի ներածութեանց
եւ արտածութեանց անհրաժեշտ գոր-
ծիքը պիտի ըլլայ :

« Այս պարագային մէջ, Պաղտատի
երկաթուղւոյ ընկերութիւնը, — գերմա-
նական վաճառականութեան եւ ար-
եւեստագործութեան յոյսը — իրեն ապա-
նովցնելու համար շահու աղբիւրն
ըլլալ մէկ մասը զոր կը յուսար իրեն
միայն սեփականել, ուրիշ ճար չունի
բայց եթէ համաձայնի կաշկածայի
կառավարութեան հետ որ հիմա տե-
ղաւորուած է շահագործութիւնը եր-
կիրներուն ալաին մէջ : Այս հեռանդ
կարք՝ որուն վերջապէս պիտի համա-
կերպի գերման ելեւմտագէտներու
գործնական օգին, առ այժմ անոնց
օտարակի գաւառներուն մը կը պատ-
ճառէ : »

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՈՒՂԵԻՈՐԱԿԱՆ ՆԻՇԵՐ

Կիլիսիայի ազդեցութիւնը մարդու վար-
ու բարիքն վրայ

Շատերին յայտնի է այլազան կլի-
մաների տարբեր ազդեցութիւնը մար-
դու ֆիզիքականի վրայ, սա դիտնա-
կանօրէն ապացուցուած է : Իսկ ինչ
վերաբերում է բարոյականի, վարք ու
բարքի տարբեր կլիմաների տակ կա-
տարուած ազդեցութեան մասին՝ դեռ
գիտութիւնը հաստատած չէ : Ես՝ եթէ

ոչ դիտնականօրէն՝ գոնէ փորձառա-
ւոր լոյս աշխարհ եմ գերում այս նոր
երեւոյթը : Հարցը ճանապարհորդու-
թեան մի արդիւնք է, ճիշդ եւ իրա-
կան :

Արաքս գետի սահմանով Ռուսաս-
տանից անցնում ենք Պարսկաստան
տեւոդութիւնը լինում է մի, երկու-
րօպէ, այսպիսի փոքրիկ անջրպետով
ներկայանում է մեր աչքին բոլորո-
վին նոր մի աշխարհ : բոլորովին ան-
նրման Արաքսի միւս ափի աշխարհին
Պարսկաստանում տեսնում ենք նորա-
նոր դէմքեր ու տիպեր անշտորհ եւ
անճոռնի տարազով, ֆիզիքապէս վա-
յելուչ եւ ուժեղ մարդկային կազմու-
թիւն բայց կեղտով պատուած ու
վայրենի ձևերով կոշտացած, ամէն
բան յաւիտենական կեղտի մէջ պար-
փակուած :

Սա առաջին եւ արտաքին մի սպա-
ւորութիւնն է :

Մտնում ենք մաքսաւորներին մեր
ուղեւորութեան հարկը վճարելու,
չըրոպատուած մէկից աւելի հսկող
պաշտօնեաներից որոց գլխի խոյրին
վրայ փայլում է պարսկական — Ասի-
ժի եւ Արեւելքի պարսկական նշանը,
իսկ նրանց մէջքից կախուած են եր-
կար դաշոյներ, ազդեակներ՝ որք ցոյց
են տալիս մեզ քաւ վճարելու անխու-
սափելի պարտաւորութիւնը : Գալիս
է մի հաստափոր հայ պարոն, բաւա-
կան քաղաքավար ձևերով եւ օրոնում
է մեր ճամբորդելու, եւ երեք չի՝ հա-
ւանելով մեր ունեցածներին՝ բարե-
հաճում է հրաւիրել՝ որ մեկնենք :
Մաքսաւորներին մեծը՝ մի ճարպագատ
եւրոպացի, անտեղեկ արեւելեան ա-
մէն լեզուներին, մի քիչ հեռուից եր-
բեմն զրաւած է խուզարկումները, եր-
բեմն օչ, երբեմն ալ՝ երբ մի հետա-
քըքրական առարկայ է երեւում
ճանապարհորդներին իրերին մէջ, դալիս
է, երկար զննում, հարցնում հայ
թարգմանի միջոցաւ, զնն ուզում ու
չի գնում : սա մաքսաւորներին մեծն
է եւ՝ աւտիճանով էլ հաւաքով մի
Պեճիկացի, վաճառք Պարսկաստանի
մաքսը կապարով տրուած է Պեճիկա-
կան ընկերութեան, ինչպէս եւ փոշուր-
Ասացիք թէ հաքսային վարչու-
թիւնը եւրոպական է, բայց բացի եւ-
րոպական անուանից՝ եւրոպական ոչ
մի կարգ ու սարք : ոչ մի դիւրութիւն
ճանապարհորդներին, գոնէ մաքսային
օրինակ, եւրոպական մաքսաւորի
նման չկայ մի առիտ, ուր ճանապար-
հորդը կարենայ մի քանի րոպէ հան-
դըտտանով կամ իւր հերթին սպասել
մինչեւ խուզարկուի : Էլ չենք հաշ-
ոււմ կանոնաւոր փոխադրիչ անձեր,
սայլակներ, կառքեր եւլն, որոնք
գուցէ մաքսաւորական չի նկատուին :
Այստեղ ամառն արեւի տակ՝ իսկ ձը-
մեռն անձրեւի եւ ձիւնի տակ ցուր-
տի մէջ եւ ցեխի վրայ փողոցում կա-
տարվում է մաքսային գործողութիւն-
ը, եւ մարդ ստիպուած է լինում ին-
քն իրան հարց տալ : Թէ ինչո՞ւ է
այս այսպէս, եւ դալիս է միմիայն մի
եղբայրացութեան, թէ նրա համար, որ
եւրոպացին չհաղորդէ Պարսկաստանը,
առաջ իր կողմից կատարել ջանալու
սովորական պարտականութիւններ :
Բայց եւրոպացին, մանաւանդ պեճիկ-
ացիք քաղաքականապէս չէ գոր գոր
ծիչներ, որոնք առաւել քան ուրիշներ
իրեն լաւ եւ ուղիղ գործողներ լինե-
լաւ ընդունակ են հաշակված՝ ինչո՞ւ են
այսպէս, ինչո՞ւ գործը լոկ անունի է
փոխուած այստեղ եւ մտածուել վեր-
ջապէս ծնունդ է տալիս մտքին —
թէ՛ կլիման է որ աղբում է մտքին,
վարքին ու բարքին, եւ եւրոպացին

գալով Պարսկաստան կամ Տաճկա-
ստան, ընդունում եւ իւրացնում է տե-
ղական սովորոյթը, սովորում է փո-
խանակ սովորեցնելու : ազդվում է եւ
խմորվում տեղային անկուժով, ինչ-
պէս միմեռնողիցի գիւտարագէտաւ,
թէ ինչ ուղղամիտ մարդ այ որ կ :
Պոսի գեսպտն նշանակեցինք, Վոսփո-
րի ջուրը խմած միջոցին փոխվեցաւ :
Ահա այսպէս էլ եւրոպացի գործակալ-
ներ ամենայն ճշգրտեալ եւ մինչեւ
իսկ առաւելութեամբ տէր են լինում
Պարսկաստանում իրանց իրաւունքնե-
րին, եկամուտներին, իսկ պարտակա-
նութեան մէջ գտնոււմ են կատարեալ
մի ափացի, եւ առաւել շատ տախիքի
որովհետեւ սրանից պահանջին էլ ան-
կարելի է լինում : Սա դեռ բոլորը չէ
մենք կը շարունակենք մեր նիշերը :

Ճիւղի

ՆՍԻՍԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՄԵՐԻԿԱ

Քաղաքական մեծ դէպք մըն էր
որ տեղի ունեցաւ Ամերիկայի Մի-
ացեալ Նահանգներուն մէջ . ընտ-
րական մեծ պայքարը՝ որ չորս
տարին անգամ մը կը կրկնուի ,
այս անգամ եւս նոյնստ հա-
րապետականներուն վերջացաւ՝ իրենց
ընտրելի թէոսոր Րուզվելթի վերըն-
տրութեամբ : Րուզվելթի այս յա-
ջողութիւնը սովորական յաղթանակ-
ներու կարգէն չէ , մինչեւ հիմա
աշխարհի մէջ չը լսուած չափով
քուէ շահեցաւ ան, այսինքն նոյնիմ .
8 ին (Ն . Տ .) կատարուած քուէ-
արկութեամբ 15 միլիոն ձայն ստա-
ցաւ Րուզվելթի : Իր մրցակիցը Բար-
քըր , ռամկավարական կուսակցու-
թեան ընտրելին , ջախջախիչ պար-
տութիւն մը կրեց . բայց աղնու-
ութիւնը ունեցաւ Րուզվելթի յաղ-
թանակը իմացածին պէս անոր սա
շնորհաւորական հեռագիրը տալու . —
« Ժողովուրդը իր քուէներով՝ ար-
գարացուց ազդեցութիւն ձեր վարչու-
թիւնը : կը շնորհաւորեմ զձեզ » :

Րուզվելթի 47 տարեկան է , Մա-
քլինի նախագահին սպաննութեամբ
անոր յաջորդիլէ առաջ շատ մը
կարեւոր պաշտօններու կոչուած է
եւ իրեն համբաւը չինած է խոշոր
զեղծումներ մերկայաբանող ընկու-
ինք որչափ ուղղամիտ նոյնչափ ալ
անձուէր հայրենասէր մը եղած է .
իր այս անձնութիւնութեան որոշ
ապացոյցը տուած է Սպանո — իմե-
րիկեան պատերազմին ատեն , երբ
կամաւորներու ստուար խումբ մը
կազմելով անոր գլուխը անցած կը-
ռուեցաւ Սպանիացիներուն դէմ ,
եւ Սանթիաքօ քաղաքին մէկ ըլլու-
րին վրայ կատարած յարձակումով
մեծ գովեստի աթոնացաւ :

Րուզվելթի նախորդ երեք տարուան
իր նախագահութեան միջոցին փայլուն
ապացոյցներ տուաւ հարստահարուած
ժողովուրդներ պաշտպանելու իր մար-
դասբութեան մասին . Ռու մանիոյ հա-
լածուած Հրեաները պաշտպանեց աղ-
ղուօրէն բողոքելով ուսմէն կառա-
վարութեան դէմ . նոյնը բրաւ Բիչնէ-
վի Հրեաներու կոտորածի միջոցին .
նոնե բոլորովին անտարբեր չը մնաց
թուրք կառավարութեան Հայոց վրայ
ի գործ դրած խժոժութեանց ստիճի-
կաղաղասիրական գործին մէջ ալ մեծ

ողեւորութիւն ցոյց տուաւ : Լա-Հէյի
գեսպանագործի միջոցին . եւ այսօր
ալ ինք նախաձեռնութիւնը կը ստան-
նէ : Լա-Հէյի մէջ չեղիր որդ գեսպանա-
գործով մը , գումարիւր է համար : Իր
արտաքին գործող վարիչը այս նպա-
տակաւ Ֆրանսայի կատարեալ համա-
ձայնութիւնը ստացած ըլլալով , այժմ
Աւստրիոյ նախարար կոմս Կոլուշովս-
քիի հետ բանակցութեան մէջ կը
գտնուի : Բայց այս ամէնի հետ միա-
տեղ Րուզվելթի մեծ կարեւորութիւն
տուած է ամերիկեան ծովային ուժին
կատարելագործման . այնպէս որ իր սա
վերջին երեք տարուան ջանքերով
Միացեալ Նահանգաց նաւային ուժը
Անգլիոյ եւ Ֆրանսայի ուժէն անմի-
ջապէս վերջը կուգայ . այսօր ան երրորդ
ծովային հսկան է եւ միշտ աճելու վը-
րայ :

Ընարական պայքարին արդիւնքը
յայտնուելէ առաջ , այդ պայքարին
ինչ միջոցներով մղուելու մասին
Ամերիկեան թերթերու տուած հե-
տեւալ տեղեկութիւնները հետա-
քըքրական կը գտնենք մեր ընթեր-
ցողներուն :

« 1900 ին հանրապետականներն հա-
ւաքեցին ու ծախսեցին 4 միլիոն
տոլար , Ռամկավարականները չը կըր-
ցին Պրայընի համար 2 միլիոնէն
աւելի ծախսել : Այս տարի Պրա-
յընի հակառակող մարդիկը , Դատա-
ւոր Փարքըրի կողմն են , ու ե-
թէ խոստացուած դրամներն սկսին
տրուել՝ Ռամկավարականները Հան-
րապետականներուն հաւաքելիք դրա-
մին կրկնը պիտի ունենան :

« Եւ — Եօքսի քաղաքը պայքարի
դրամն հայթայիտ ոսկեղէն կեղտո-
նըն է : « Թրքոյններն հոն են , եր-
կաթուղիները անկից կը կառա-
վարուին , հոն կը բնակին արհես-
տաւորները , որոնց ապրանքները
պաշտպանուելու են , հոն կը գըա-
նուին ներածողները , որոնց հա-
մար կառավարութեան կողմնակցու-
թիւնը միլիոններ կը նշանակէ :
Նիւ Եօքսի մէջ էր որ Մերակու-
տական Հաննա՝ մէկ օրուան մէջ
700 հազար տոլար հաւաքեց , դեռ
չի թօթվելով շատ մը ծառեր , ո-
րոնք ոսկի պիտի տային :

Այս երկու խումբերը ինչ որ ալ
ըլլայ իրենց յարձակումի եղանակը
սա բանն ունին հասարակաց — մի-
եւեռն աղբիւրէն կը ստանան իրենց
դրամները , այսինքն առեւտրական
չա՞ռ ունեցող մարդիկը , որոնց
բարօրութիւնը կարեւոր է այս կամ
այն կառավարական ձեւէն , եթէ
խոստումներով չի կրնան հաւաքել
պէտք եղած դրամը , սպանալիքով
կը հաւաքեն :

Ասիկա ապացուցանելու համար
հետեւեալ օրինակը կը բաւէ : Կա-
ռավարական պաշտօնի մէջ մարդ մը
կար , որ 2500 տոլար տարեկան
վարձ կատարար : Տարուէ տարի
այս մարդը կը նպաստէր պայքա-
րի դրամագլխին , բայց 1900 ին
երբ խորհեցաւ թէ՛ Պրայընը պէտք
էր չափէր , մերժեց հանրապետական-
ներուն օգնել՝ ըսելով .
— Սենթ մը չեմ տար :

Սպանալիք չըրին , չի համոզե-
ցին , չը թախանձեցին եւ ոչ ալ
ազդարարութիւն մը տուին : Մեր-
ժումը իր պաղը վճած էր : Նա-
խագահական ընտրութիւնէն վերջ օր
մը անցած չէր , երբ Ուաշինկթը-
նէն լուր եկաւ իրեն թէ իր ամ-
սականը 1800 տոլարի ինկած էր ,

որովհետեւ գործը լաւ կերպով կատարած չէր : Երկու ամիս վերջը լսեց թէ՛ ինք անկարողութիւն ցոյց տուած է իր գործին մէջ : Կետեաբար սոսակներ 1600 ի իջած էր : Վեց ամիսներու մէջ ամսականը 1000 ի վերածուեցաւ :

Այս նախագահական պայքարին համար հաւաքման գրամները կը ծախսուէին այլ եւ այլ կերպերով : 1900 ին հանրապետականները 2 միլիոն տոլար ծախսեցին գրքերու, տետրակներու, չըջտերակամներու, յայտարարութիւններու եւ զանազան ցրուելու համար :

Մասնաւոր տեղեր կը պահուին Նիւ Եորքի Երեւոյ մէջ : Ասկից զատ մեծ բանակը կայ ատենախօսներու, հմայիչներու, որոնք կուսակցութեան վարդապետութիւնը կը քարոզեն պարտէզներու մէջ, ծամբանքներ տնկելու, ամէն տեղ : Հանրապետականները 50 հաւաքման նախօրէին, որոնց իւրաքանչիւրը 500 տոլար չարախօսական կը ստանար, իրեն ծածկողութեւն ծախքէն զատ : Ուրիշներ ալ կային 50—100 չարախօսական :

Մարդիկ որ տարին տասներկու ամիս չարախօս 15 տոլարով կը գոհանային այս ընտրական պայքարներու միջոցին օրական 15 տոլար ծախսելու եւ «Եւստիանիայով ծախ» ընելու դժուարութիւն չեն քաշեր :

Ասոնց վրայ աւելցուելու է այն զբաղմունքը, որոնք կը ծախսուին ժողովատեղիներու, երաժշտականութեւն եւ հրապարակութիւններու համար, գրեթէ կէս միլիոնի չափ :

ԾԱՂԿԱՔԱՂ

Բեքինի պետական ատտորադիւնի կողմէ յառաջիկայ տարուան համար պատրաստուած օրացոյցը մեծ վախ յառաջ բերած է նախահաւատ չեն ժողովուրդին մէջ : Որպէսզի նախորդ տարիներու ընթացքին մէջ

կորսուած ժամանակը վատկուէր, նոր օրացոյցը երկու անգամ հաշուած է 8 ըրդ ամիսը, այնպէս որ յառաջիկայ տարին 13 լուսնական ամիս պիտի ունենայ : Այս բանին մէջ ժողովուրդը մեծ դժբաղդութիւններու նշան մը կը տեսնէ որովհետեւ վերջին մեծ ողորդումը եւ անկէ հետեւած սովը տեղի ունեցան զարմեալ երկու հատ 8 ըրդ ամիս ունեցող նահանջ տարուոյն մէջ : Յատուցիկայ տարուոյն համար 2 ինացիք ուրիշ դժբաղդութիւնէ մը կը վախնան — պատերազմէ, ինչպէս նաեւ կը դուշակեն 2 ին ազգային մարդարները, բան մը որ արդէն խելքի մօտ է :

Խաղաղութեան յայտնի ռահվերայ Պարոնուհի Պերթա ֆօն Սուլիէր, որ Ամերիկա գացած էր յօդուտ իր պաշտպանած դատին, հիմա Եւրոպա վերադարձած է : Մարդասէր Պարոնուհին հոն (Ամերիկայի մէջ) մեծ պատիւներով ընդունուած է, մանաւանդ Աւստրիացիներու կողմանէ : անոնց մէջ ժողովին մէջ Տիկինը խօսելով հետեւեալները քսած է ի միջի այլոց : «Մահը լաւ է իսկ սպաննուիլը գէշ բան է : Կը յիշեմ տեղ մը կարգացած ըլլալս թէ մի սպաններ » : այդ իրաւունքը բնութիւնը միայն ունի, իսկ պատերազմը բնաւ : Ամենալաւ պարագային մէջ իսկ պատերազմը յիմարութիւն մըն է ու մի միայն վայել, բայց ոչ մարդուն : Եստ կը նախանձիւ ամերիկեան երիտասարդութեան, որ իր ուսուցիչներէն սորված է գուրգուրալ համաշխարհային խաղաղութեան վրայ եւ այս եղանակէ իր մտաւոր պարը : Եւրոպայի երիտասարդութիւնը չհամարձակիր այս տեսակ « ոչ հայրենասիրական » ըլլալ : Հետեւաբար մեծ է յոսս ամերիկեան երիտասարդութեան վրայ : Նոյն ինքը (Միացեալ Նահանգներու) նախագահը երկէ ըսաւ ինձ, թէ խաղաղութեան պայմանագիր պիտի կնքէ աշխարհի բոլոր ազգերու հետ » :

Ճօն ֆօքսը որ պատերազմին սկիզբները Ճարտն կը գտնուէր, հետեւեալը կը պատմէ անդրկական լրագրի մը մէջ :

Կինները կուտային ամէն ունեցածնին, անոնք կը չորհուրէին իրենց արդուզարգի ծախսը եւ այսպէսով հաւաքուած դրամը կը նուիրէին յօգուտ պատերազմ սկսած ծախքին : Եւ պատահականորէր ամէն ամիս իրենց թոշակէն մաս մը կը նուիրէին այդ նըպատակին : հազարաւոր բնամիջներ կը հրաժարէին իրենց մէկ օրուան աւտոմոբիլ, միայն անոր համար որ պէս զի կարելիութիւն ունենան աւելի բան մը նուիրելու պատերազմական պիտոյքներուն : Երբ յօգուածագիրը ուղեց իր սպասուէին այդ բանին յատկացեալ գումարը արկղին մէջ ի պահ դնել, սպասուէին հոկաւակցաւ ատոր եւ պահանջեց որ դրամը ամբողջապէս պատերազմական ծանծախմբին յանձնուի, ըսելով « ոչ տիար, մի մտածէր իմ ապագաս, ստակը լաւ բան մըն է, բայց աւելի լաւ է նուիրել զայն Հայրենիքի դատին » : այս բանը մեծ պատիւ մըն է ինձ համար » :

Մայրերը ու քանութեամբ իրենց զաւակները պատերազմի դաշտը կը զբոկէին : չը տեսայ մայր մը որ արցունք թափէր կամ տխրութեան ամենափոքրիկ նշան մը ցոյց տար : այդ տեսակ մայր մը, երբ իր վեջին զաւակը կը զրկէր պատերազմի, աղաղակեց « Ինչ մեծ երջանկութիւն է չորս զաւակ ունենալ, ու չորսն ալ հայրենիքին նուիրել » : Յօդուածագիրը շատ անգումներ լսեց այս անասիկ բացառանշունքներ, եւ համոզուած կը յայտնէ որ ատոնք հոգիէ քղնած են, այն տոններու գումարները վրայ որոնց մէկ անգամ պատերազմ գացած է, կարմիր տախտակ մը կը դետեղուի սա մականգրութեամբ « պատերազմի մեկնեցաւ » : իսկ եթէ այդ սննդ մեկնելէ առաջ ատեն կարմիր տեղ սեւ տախտակ մը կը դնեն վրան գրուած, « թող իր արիւնքիւ յիշատակը յաւիտենական ըլլայ » : Հեղինակին վկայութեան համեմատ

ներկայ պատերազմի ճարտնցի կինը կը բարձրացունէ իր խոնարհ ու ստորակարգեալ վիճակէն : Նա մայր մըն է որ իր զաւակները պատերազմի կը զրկէ եւ ատու կը հպարտանայ : Նա (կինը) կը խորախօսէ ու վառ կը պահէ իր էրկան ու զաւակներուն պատերազմական խանդը : Եւ երբ կարելի է, կը ծպտի ու կընկերանայ զօրաց կառարելով իր ու ժերուն ներած չափով այլ եւ այլ պաշտօններ : Նա զօրականներ որոնք կը զանազան եւ անտրտունջ կը կրէ իր ծանր բեռը :

ԱԶԳԱՅԻՆ

Կիլիկիոյ կաթողիկոսութեան յատուկ պետական ամսագրացկը՝ որ ամիսին թափուր մընալէն ի վեր դադարած էր, պիտի սկսի տրուել 8 . 8 . Սահակ Կաթողիկոսին : Իր նախորդին կը տրուէր ամսական 3500 զրշ :

Նոյնպէս իրատէ մը Սոյ վանքը կալուածակտն բոլոր տուրքերէ զերծ հռչակած է : Նոյն իրատէն մայրավանքին վերաշինութեան արտօնութիւն տուած է :

— Պատրիարքարանի Խառն ժողովը Բշ . օրուան իր բացառիկ նիստին մէջ նկատողութեան առած է 1881 ի այն ծրագիրը որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Էջմիածնայ կ'այր Աթոռին, Պօլսոյ Պատրիարքարանի եւ իր թեմերուն հետ ունենալիք յարաբերութեանց եղանակը ու ձեւը կորոշէր, բայց Սոյ (Կիլիկիոյ) կաթողիկոսը մերժած էր զայն ընդունել : Խառն ժողովը այդ ծրագիրը աննշան բարեփոխութեամբ մը որ ըստ «Մարտն

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵԾԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Սորանից յետոյ կաթողիկոսական կոնգրակով արձակուեցին իրանց պաշտօններէ թիֆլիսի կոնսիստորեայի անդամներն եւ ատենադպիր Յակովբ Կարինեանցը : Բայց երբոր կաթողիկոսի կոնգրակը կոնսիստորեայի ատենուժ կարգուեմն, իսկոյն Կարապետ եպիսկոպոսին իմացում են տալիս եւ սա անձամբ գալիս է կոնսիստորիա եւ խորհաբար մերժում է կոնգրակի գործադրութիւնը, ասելով . « Կաթողիկոսն իրաւունք չունի կոնսիստորիայի անդամներ հրաժարեցնելու : Ես եմ կառավարութիւնից հոսաատուած առաջնորդ, կոնսիստորիան իմ իշխանութեան ներքոյ է » : Կաթողիկոսին իմացեցին Կարապետի ընդդիմութիւնը : Վեհափառն յառաջագոյն պատրաստել էր մի այլ կոնգրակ որ եթէ Կարապետ եպիսկոպոսը հակառակի կոնսիստորեայի անդամներն եւ ատենադպիր հրաժարեցնելուն՝ երկրորդ կոնգրակը տրուի, ուրով ինքն եպիսկոպոսն էլ համարուեմ էր վեհապետը առաջնորդի պաշտօնից հրաժարեցրած : Երբ իմացաւ եպիսկոպոսի հակառակութիւնը ինչոյն ուղարկեց այս կոնգրակն, որ Ատենուժ

կարգում են այն միջոցին, երբ Կարապետ եպիսկոպոսն բաղմած է լինում այնտեղ : Կոնգրակը լսելուց յետոյ Կարապետը թողնում է կոնսիստորեան եւ վերադառնում է առաջնորդարան : Եւ իւր համամիտների խորհրդով Ներսէսի վերայ գաղտնի բողոք է ուղարկում Պատմութիւն . որ այն ժամանակուժ Լեւոնտանի վոխարքայ էր : Եւ այս այն յուսով եւ այն հաշուով, թէ Պատմութիւնը Ներսէսի թշնամին լինելով, կ'օգնի իրան : Այդ բողոքի հետեւանքը այն է լինում, որ Պատմութիւնը միջնորդում է փոխարքային պաշապան լինել Կարապետ եպիսկոպոսի իրաւունքներին : Իշխան Վարանցովը պատասխանում է, Ներսէսի կարգադրութիւնները արդարացի են, եւ թէ իրան էլ քաջ յայտնի է Կարապետ եպիսկոպոսի եւ նորա շրջապատողների իրանց հոգեւոր կոչման անվայել գործառնութիւնները եւ աններելի ընթացթացքը եւ աւելացնում է, թէ Վրաստանի բոլոր Հայերն անհամբեր սպասում էին Ներսէսի գալստեանը, որ հոգեւորականների մէջ կաթողիկոսական իշխանութեամբ կորդ եւ ազդեցութիւն մտցի եւ այն : Վարանցովն ինքն յայտնել էր կաթողիկոսին Պատմութիւնի միջնորդութիւնը : Կարապետ եպիսկոպոսը մի քանի տասնեակ հազար հայ գերբաւաստներ յորդորել եւ Ռուսաստան էր գաղթեցրել ռուս—տաճիկական պատերազմից յետոյ 1830 թուին : ռուսի կա-

ռավարութիւնը նորան արտօնութիւն էր տուել, որ մինչեւ իւր մահը գաղթական հայերի առաջնորդ լինի Տայք գաւառում (Ախալցխա), որ տեղ գաղթականներն էին հաստատուել, եւ հոգեւոր բարձր իշխանութիւնն իրաւունք պիտի չունենար հրաժարեցնել նորան առաջնորդութիւնից : Բայց Ներսէսը զրկեց նորան այս արտօնութիւնից : Երբ որ Կարապետ եպիսկոպոսը բողոքել էր կառավարութեան այս մասին եւ վերջինս Ներսէսից բացատրութիւն էր պահանջել, նա պատասխանեց թէ Կարապետ եպիսկոպոսն ինքնայոժար կամքով իրան զրկել է այս արտօնութիւնից, երբ թիֆլիսի առաջնորդութիւնն է յանձնառու եղել : Կառավարութիւնն իրաւացի գտաւ կաթողիկոսի տուած բացատրութիւններն եւ Կարապետը այնուհետեւ զընաց Ախալցխա եւ պաշտօնազուրկ մնաց այնտեղ մինչեւ իւր մահը : Նորանից զանգատաւոր էին եւ արդրոււմի, գաղթականները, ըստ որում նա Արգրում քաղաքի եւ նորա վիճակի եկեղեցիների շատ արծաթեալ զարդ ու անօթեղէններն իւրացրել էր գաղթելու միջոցին իրբեւ վիճակի առաջնորդ : Կաթողիկոսը դարձեալ Կարապետ եպիսկոպոսին առաջնորդից եւ կառավարութիւնն էլ հաստատեց Սինօղի անգամ եւ նորան հրաւիրելու համար ուղարկեց Մակար վարդապետին, որ Սինօղի անգամ էր, եւ հրապարակած մնաց Ախալցխայում բաւական երկար : (Շարունակելի)

զուգահեռ արդի կաթնորկոսին հովուական իրաւասութիւնը գործող հանգամանք մը ունի, Օրմանեանի միջոցաւ պաշտօնագրով մը կաթնորկոսին ուղարկած է Բայք Ն. Ս. Օժու-թիւնը այդ ծրագրի մասին ու է կարծիք չէ յայտնած. ոմանք կըսեն թէ մերժած է զայն ստորագրել կամ ընդունել:

— Կաթնորկոսը մեկնումի պատ-րաստութիւններ կը տեսնէ:

— Աթէնքի մէջ հայ եկեղեցի մը կառուցանելու համար յոյն կառավարութիւնը յարմար գե-տին մը նուիրել է: Տեղւոյն հոգաբարձութիւնը շինութեան պիտի սկսի եղեր: Պատրիարքա-րանը գրած է որ ծանօթ Տ. Խո-րէն քահանայն պահուի հոն: Հո-գաբարձութիւնը զանի ճամբել ուղած էր:

— Բարեպաշտ անձ մը կարեւոր գումար մը յանձնեց Ս. Կաթնոր-կոսին իբր կտակ, պայմանաւ որ տարին անգամ մը յատուկ պատա-րագ մատուցուի Սոյ վանքին մէջ իր նշնեցեալներուն հոգւոյն համար:

— Պէրպէրեան վարժարանի սաները եւս գումար մը նուիրած են Կիլիկիոյ կարօտ վարժարան-նեւուն:

— Կիւմանք թէ Պուրկալի մէջ քանի մը Դաշնակցականներ յարձակում գործած են Միւթե-նականներու վրայ: Ստիկանու-թիւնը կուրը գաղ-րեցուցած է ու գործը կառավարութեան ին-կած: Մանրամասնութիւնը յա-ջորդով:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՒԱ

— Մաքէթոնիանը կեզէքի գաղաւթըն Լօքս գաղաւթըն-տա պիր պուկար չէթասը Սթօ-եանով նամ պիր քաբասը գաթի իթուի պանըն զէվճէսի վէ իքի միստուարը տախի տահա էվ-վէ Էօլտիւրիւմիւ իտիւթ: Պու ճինայթիւն օնպէպի բում Բաթ-րիգիւն թարափտարըզ իթմէսի տիր: Նասը քաշանըն գօման-տասը ալթընտա օլ թարափա ասքէր Էօլտիւրը:

Տէվլէթիւթիւն միւլթիէ մէմուր-լարը չէթալարըն ուլթընըզ հարէքթիւթիւնէ գարը թէտ-պիրլէր էլէ ալթնմտըղը իչիւն շէտիտէն բրթէսթ իթտիլէր: Քէզա մէլքէր մէմուրար պիր թագըմ թալէպլէր իթմիլէրիւ-նի տիկէր միլլէթլէր կիպի Պու-կարարա տախի պիր կաղէթտ նէշը իթմէկէ մէզուրիլէթ վէ-րիլմէսի վէ եէնի քիլիւթլէր ին-չասընա միւստա օլթնմտը:

— Սթանպուլտան Բօշթա յա պիտիւրիլթիւնէ պիտէն, Մա-քէթոնիա վագալարընտան տ-

լայը Անատուլյա մէնքի եօլ-լանըմըջ օլան Պուկարլարտան 30 քիչի իչիւն աֆլը շահանէ սուտուր իթմիլ օլարագ, օնլար եագընտա ալտէթ իտէճէքլէր իմիլ:

— Աթէնքա օսմանը էլչիսիւն Սթանպուլտա իտանէսիւնէ էվլէլ-քի ագչամ իըրըզլար կիրուպ պիր թագըմ թէզիւնաթլէ պիր չօգ էվրագ չալմըշլար: Իշպու վուգուաթ հիւքիւմէթիւն պիր էնթրիքի զանն օլթնլար:

Մաքէթոնիա ժանտարմասընա մախուս եէնի իւլ աւտորիալը զտպիլթլէր Սքիւպէ եէթիւթիւթիւթ: Տիկէր իւլ եէնի զապիթ տախի պու կիւնլէրտէ եէթիւթէնէկի պիտիւրիլթիւթ: Քէզա ալթըր ուս զապիլթլէր Սէլանիլէ եէ-թիւթէնէքլէր:

— Ամերիկա էլչիսի Պապը Սլիի տախի սուլհ գօնթէրանսընա տա-վէթ իթտի: Պապը Ալի տիկէր տէվլէթլէրի գարարընա թաթ-պիլի հարէքթի իտիճէկիւնի պիւ-տիրտի:

— Բրէզիլէնտէն պիտիւրիլթիլի իւզրէ, պու գաղանըն Արնալուտ րէշիւթի Բրէզիլէն գաղաւթնտա իսլահաթ իճրա իտիլմէմէսի թէքլիթ իթմիլ իտիլէր, ֆագաթ պիւլթիս իտիլահաթ պաշլանըլ-մասընտան հիտտէթլէնուպլէթա լար թէշքիլ իթմէքլէ էթրաֆը սօյմագտա վէ թէստաիլթի իտէնի Էօլտիւրիւթէքլէ իմիլլէր: Պու չէ-թալար էքթիլի ճար տաղարըն-տա պուլթնմագտա տըրլար:

— Ժան Մաքէթոնիատան պահա իտէրէք, եալընըզ Աւտորիա վէ Բուսիա վասիթասը իլէ իսլահա թըն իճրա օլահալընա ինանմա-յուպ, տիկէր պէօյիւք տէվլէթլէ-րին տախի իշթիւրաք իթմէլէ-րինին իգթիւզասըն կէօսթէրի-յօր:

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Սերպիա գըրալը Սօֆիատա հիւանի գապուլիլթի պուլմա-սընտան տօլայը պիր գաթ տահա թէշէքիւթընը իպ-րալ իթմէք իչիւն վիւվէլա րէշիսի ժէնէրալ Բ. Բէթրօ-վա վէ ժէնէրալ Նիքօլայէվէ պիրէր ալթուն մետալ կէօնտէր-միլ տիր:

— «Բարիկ վէ Ֆիլէմէնկ» պան-գասը վէ պուկար հիւքիւմէ-թի պէյնիտէ իմիլանմըջ օլան 100 միլիոն ֆր. իսթիգ-րալ մէսէլէսի տիւն Սօպրանի-էտէ միւլթէքէրէյէ ալթնաճագ ըտը: Պու եէնի իսթիգրալ 100 տէ ֆայիլէ ազա օլթնմըջ տըր:

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Լօնտօն 7 նոյեմ.— Պիր րուս գօնթը թօրթիլէօր վաթօրը նոյեմ. 2 տէ բէք ֆէնա պիր հա-վատ Զիֆույտ եէթիլթի. օլ էս-նտտէ տէնիլտէն շէտիտ թօր սէ-տալարը իչիտիլմէքտէ իտի: Բօրթ Սթիլթուր տօնանմասը մու-հասէրէ գօրտօնընը պօղապ չըգ-մըջ զանն օլթնլար: Ֆագաթ թափսիլաթ եօգ տըր:

— Իքի ինկիլիզ վաթօրլարը Բօրթ Արթուրա գօնթիւթապնտ մուհիմմաթ կէօթիւթիլթի զաննը իլէ ճաթօնլարտան թօթա թու-թուլարը: Ինկիլիզ գաթթան-լարը թագիլիսաթ թալէպ իտէր-լէր իմիլ:

— Ժէնէրալ Գուրօթթիւն նոյեմ. 4 թարիլլէ Բէթէրա-պուրկա պիտիւրմիլ տիր: «Պու կիւն սիւքիւնէթլի կէշալի, տիւչ-ման 400 ատըմ գատար պիզտէն իրագ պուլթնլար: Կիճէ սօլուգ զէրօտան օնպուչուգ տէրէճէ ա-շաղը տիւլիլթի: Քիւրքլէր եէ-թիլթիլթի, նաֆագա թալիլիսաթ թէէմին օլթնմըջ տըր: ասքէրլէր ճէսարէթտէ վէ սըհէթտէ տիր-լէր: Հունիս րրմալը իւզէրին-տէքի քէօթիւթլէրի եագտըգ:»

— Բէթէրապուրկ 7 նոյեմ.— Մուգտէնտէն րուս թէլէկրաֆ աթանսըն պիտիւրիլթիլիէ պի-նան, տիւն Բաթիլօլաթա գա-լէսիւնէ գալը ճիւճուլ վուգու պուլտու: Պու կիւն ճաթօնլար պիլիմ սաղ ճէնահմըջա գարը շէտիտ թօր տարպէսիւնէ պաշլա-տըլար: Ումում հիւճուլա պէք-լէնիլթիլթի:

ՄԻԹԷՆԷՎՎԻԷ

Բարիկ 7 նոյեմ. — Կիրիտ առասընըն Եունանիստան իլէ պիրլէշմէսիւն Ինկիլթէրա մու-խալէֆէթ իտէյօր:

— Բուսիանըն եէնի տախիլիլէ նաղըրը Մ. Լիւրքի Զարա պիր լաեհիս թագաթիմ իթմիլ տիր: Իշպու Լաեհիս մուհիպ ումում Բուսիա 16 տախիլէ թագաթիմ օլթնաճագ: հէր պիր տախիլէն պիր մէպուս ինթի-լապ օլթնարագ, պու մէպուս-լարտան թէշքիլ օլթնան հէյթ ճէշալիլիլթի թէշէքիլթիլթի Զարա արդ իթմէք հագգընա հայիլ օլահագ: Իշպու իսլահաթ ճէտվէլի միւսթագպէտէ Բու-սիատա Գանուը Էտսի իճրա-սը իչիւն թէմէլ առտ օլթնը-յօր:

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱՖԻՍ

Լօնտօն 9 նոյեմ.— Շանկայտան պա թէլէկրաֆ Սրանտարտա պիտիւրիլթիլ տիր: «Րօսթօրթի նամ գօնթթօրթիլթիլթի իլէ պէրա-

պէր տիկէր իւլ գօնթթօրթիլթիլթի վաթօրլարը Բօրթ Արթուրա գալմայա մուսֆագ օլտուլար: ճաթօնլար պուլթնլարտան իքիսի-նին արգասընտան եէթիլթէք պաթըրթլար: իւլիւնճիսի գաչ-տը:

Պու ալըն 3 ինտէ ճաթօնլար պիր լաղըմ վասիթասի իլէ Բօրթ Արթուրըն շարգ ճիհէթիլտէ պուլթնան վէ էրլանիլանը մու-հաֆագա իտէն՝ Սունկուչան իս-թիլիլթիլթի հալայա ալթարլար: Քէզա Բուսիանըն պիր չօգ Մաք-սիլ թօրլարընը գուլլանըմաղ հալէ պըրագտըլար:

— Պէրլին 9 նոյեմ.— Մուգտէն-տէն Լօքալ Անցալիլթիլթի պիտի-րիլթիլթի: «Րուս պաշ օրտուկեա-հընտա Բօրթ Արթուրըն տահա իսլայը վագըթ տայանաճաղընա գանի տիրլէր: Շէհրին տախիլի ինթիլթիլթի 10 մէթրօ տէրին պուլթնմագլէ հիւճուլտան գօրգ-մաղլար: Էլէր գարա հիհէթիլթի-տէն իսթիլթիլթիլթի զապլթ օլթն-սալար վէ չէհրին իչիլթի տախի կիրսէլթի, տէնիլթի սահիլլէրիտէ պուլթնան իսթիլթիլթիլթի տահա պիր միւտտէթ տայանապիլթ-ճէքլէր: Էօյլէքի ճաթօնլար Պալ-թիլկ տօնանմասը եէթիլթիլթիլթի էվլէլ՝ անա գարըն սահիլթէքի պու իսթիլթիլթիլթիլթի զապլիլթիլ-տիրմէկէ վագըթ պուլթնայաճ-ճաղլար:»

ԹԻԻՔՃԱՐԹԷ

ՎԱՌՆԱ,	նոյ.	10
ՉԱՆԻՐԷ		
ՊՈՒՂՏԱՅ		
Վալիօն	54-60 լիպ.	9.50 / 11.60
Սրապա	52-62 լիպ.	9 / 11.90
ԱՐԱՅ		
Վալիօն	100 քիլօ հին	10.30/10.40
նոր		
Արապա	42-45 լիպ.	5.40/ 6.
ԵՈՒՂԱՅԱՐԱՊԱ	33/36 լպ.	4. 20/4.40
Վալիօն	100 քիլօ	10.40/10.60
ՅԱՍՈՒԼԵՍ	100 քիլօ	25-26
Արապա	100 քիլ.	24-26
ՏԱՐԸ	արապա հէքթ.	14-15
ՔՕԼՕ2	արապա 55-60 լպ	9.90 / 11
ՄԻՍԻՐ	57-58 լպ	7.60/8
ՉԱՎՏԱՐ	արապա	7.90-8.10
«	100 քիլօ	11.20/11.30
Կիւնտէ	40-50 վալիօն վէ	50-60
արապա	կէլմէքտէ. վալիօն մուսթէլէսի	
նարթէն	20 ֆր. արապա մուսթէլէսի	
նարթէն	20. 20 :	

ՍԱՐԱՖԻՅԷ

Նարթէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրսը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԹԷ

Վարնա	րիսթապնտա պագգալիլթի	
մուլթիլթի	պու կիւնքի ֆիլպթը, տիլթու	
ֆրանք իլէ:		
ԳԱՎԷԷ		1,90/2
Շէֆէր	նէմէ	78
Շէֆէր	[քէտմէ] սանարգ	40.
Բիլիլթի	Ֆիլպթ չուլալ	47.
»	ճաթն	38.
»	Ինկիլիլթի	28
»	Բիլթի	50
ԿԱՂ	անարը	9. 50
ՉԵՅԹԻՆ	հաղը քիլօ	90.—
ԳՈՒՐՈՒԼԱԳԷԼԻ		3 10

Одговорникъ А. Курбетиянъ
печатица "Възникостъ" — Варна